



«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail:
info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

22.07.2019թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Անդրեյ Ղուկասյանին

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80

Լրացուցիչ հարցում

Հարգելի պարոն *Ղուկասյան*,

«Հետք» էլեկտրոնային թերթը դեռևս 12.07.2019թ. հարցում է ուղարկել Ձեզ: Պատասխանից առաջացել է լրացուցիչ հարցադրումների անհրաժեշտություն, ուստի «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9, 12-րդ հոդվածների հիմքով, խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

- 1. Պատասխանում նշված է, որ մարզպետի խորհրդական Հարություն Սամվելի Այվազյանը և մարզպետարանի գորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Սպարտակ Հայկազի Ղուբայանք հաշվառված են Երևան քաղաքում, սակայն փաստացի բնակվում են Լոռու մարզում: Եթե նշված անձինք բնակվում են վարձակալական հիմունքներով և բնակարանների վարձավճարները փոխհատուցվում են պետական միջոցներից, տրամադրել նշված անձնաց բնակարանների վարձավճարների և փոխհատուցվող գումարների չափերը:*

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ Գ. Բալասանյան